

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Գլխավոր տեղեկություն**

Համար	N 348-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Հիմնական ակտ (30.04.2011-16.07.2011)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2011.04.20/22(825) Հոդ.435
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	24.03.2011
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	11.04.2011
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	30.04.2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2011 թվականի N 348-Ն

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման 19-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, ինչպես նաև ոռոգման ոլորտի կազմակերպությունների կողմից շահագործվող մի շարք ջրային համակարգերի ամենամյա նորոգումների կատարման, ոռոգման համակարգում հրատապ լուծում պահանջող աշխատանքների իրականացման և ոռոգման սեգոնի արդյունավետ կազմակերպման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ոռոգման համակարգերի հիմնանորոգման 2011 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ սույն որոշման հավելվածի 1-ին բաժնում նշված գումարները Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման համապատասխանաբար «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» և «Նախագծահետազոտական ծախսեր» հոդվածներով, իսկ հավելվածի 2-րդ բաժնում նշված գումարները՝ ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին՝ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով, իսկ ջրօգտագործողների ընկերություններին՝ «Այլ կապիտալ դրամաշնորհներ» հոդվածով՝ նշված հավելվածով նախատեսված կազմակերպություններին համապատասխան պայմանագրերի հիման վրա նվիրաբերելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության վարչապետ

2011 թ. ապրիլի 11  
Երևան

S. Սարգսյան

Հավելված  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մարտի 24-ի N 348-Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ

NN ը/կ	Օբյեկտը շահագործող կազմակերպության անվանումը	Օբյեկտի անվանումը	Կատարվելիք աշխատանքների համառոտ բնութագիրը	Ընդամենը՝ գումարի չափը		Սկզբված արժեքը
				հազ. դրամ	տեխ. վերա- հսկման արժեքը	
<b>1. Տարվա ընթացքում իրականացվող աշխատանքները</b>						
1.	«Մուսալեռ» ՑՕԸ	Էջմիածնի ջրանցք	Նախատեսվում է վերականգնել ջրանցքի հատումը Երևան-Էջմիածին-Արմավիր մայրուղու հետ, որը գտնվում է վթարային վիճակում: Վերականգնվում է ջրանցքի մոտ 250 մ 9-ձև բլրկներով հատվածը և վերակառուցվում է մոտ 800մ-ԼՐ-8 տիպի վաքերով ջրանցքի հատվածը:	41,000.0		820.0
2.	«Մասիս» ՑՕԸ	Արբասի ջրանցք	ՊԿ 0+00 - ՊԿ12+00 երկարության առանձին հատվածների հատակի և շեփերի բետոնապատում, ե/բ սալերի տեղադրում և ջերմային կարերի նորոգում:	22,878.7	Նախագծված է:	448.6
3.	«Վեդի» ՑՕԸ	Նոր-Կյանք բաժանարար	Վերականգնվում է ՊԿ0+00-ՊԿ 8+80 հատվածը: Նախատեսվում է 77 հատ ԼՐ - 80 տիպի ե/բ վաքերի փոխարինում և 21 հատ միջանկյալ քայքայված հենարանների վերականգնում:	11,165.7	Նախագծված է:	219.0
		Գոռավանի պոմպայ-կայանի մղվան խողովակաշար	Դ=325 մմ,Լ=1349գծմ վրա մետաղական խողովակաշարի վերականգնում, անկերային և միջանկյալ հենարանների նորոգում:	49,548.7	Նախագծված է:	900.0
4.	«Շիրակ» ՑՕԸ	Աջափնյա ջրանցքի ներքին ջրանցք	Ջրանցքի ՊԿ 00+00-ից - ՊԿ1+35 հատվածի հատակի և շեփերի բետոնապատում և 2 դյուկերների վերականգնում: Առաջին դյուկերի 400 մմ ասբեստոցեմենտյա խողովակը փոխարինվում է նույն տրամագծով մետաղական խողովակով:	49,432.5	Նախագծված է:	964.6
5.	«Գետիկ» ՑՕԸ	Սպիտակի աջ ափ և ձախ ափ ջրակների հեռացնող ջրանցքներ և ջրավազաններ	Ջրանցքի ՊԿ 00+00-ից - ՊԿ10+73 հատվածում ջրանցքի հատակի և շեփերի բետոնապատում, ե/բ սալերի տեղադրում, ԼՐ տիպի վաքերի տեղադրում, կարերի նորոգում:	19092.5	Նախագծված է:	374.4
6.	«Վարդենիսի» ՑՕԸ	ՀԷԿ-ի ջրանցք	Ջրանցքի առանձին հատվածներում պատերի սվաղ ցեմ. շտափսով : Հատակի և պատերի բետոնապատում: Ջերմային կարերի նորոգում:	14,401.0	Նախագծված է:	282.4
7.	«Նոյնբերյան» ՑՕԸ	Բազմատիճան ջրակ-ի մայր ջրանցք և աջ ճյուղ	Ջրանցքի ՊԿ 13+22-ՊԿ13+42 ակվեդուկի հատակի բետոնացում, աջ ճյուղ ջրանցքի 408 գծմ. հատվածի և դյուկերի ելքամասի խողովակների վերականգնում:	16,592.7	Նախագծված է:	325.4
Նախատեսվում է						Կաահոմիմ Աատան օաոաօի 30

8	«Մեդի» ՑՕԸ	Ազարակ քաղաքի ներտնտեսային ցանցի նորոգում	Հաիագործման համար ոչ պիտանի վերգետնյա կառուցված ոռոգման ցանցի խողովակները փոխարինել նոր ստորգետնյա խողովակներով: Կվերականցվի Բ-1, Բ-3, Բ-4 և Բ-5 Դ=273 մմ տրամագծով մագիստրալ ջրագծերը ընդհանուր 1313 զմմ երկարությամբ:	47,870.2	Նախագծված է:	843.0	հա հողատարածքների ոռոգումը, որոնք նախկինում ոռոգվել են խմելու ջրով, տարեկան կնխայվի շուրջ 110.0 հազ. խ.մ խմելու ջրով, որը կնպաստի ազգայնակուրսյան խմելու ջրի քանակի ավելացմանը:
Ընդամենը				271,982.0	0.0	5,177.4	
9.	«Մեյիորացիա» ՓԲԸ	Լիճ գյուղի չորացման ցանցի վերականգնման և վերակառուցման աշխատանքների շարունակություն	Չորացման ցանցի վերականգնման և վերակառուցման աշխատանքների շարունակություն:	61012.7		1250	Կվերականցվի մի քանի տասնյակ բնակելի տների ջրակառուցում և կապահովվի ծրագրված բերքի ստացումը տնամերձ հողամասերից և հարակից տարածքներից:
ԱՍԲԻՆՑԻ ԸՍՏ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻ				332,994.7	0.0	6,427.4	
<b>2. Ոռոգման համակարգերում հրատապ լուծում պահանջող աշխատանքները</b>							
1.	«խոյ» ՑՕԸ	Ստ. Հրազդան ջրանցքի II հերթի մայր ջրանցքի դրոտացին խողովակաշար Ակնայիճի վ. ջրանցքին	Դ=720 մմ տրամագծով Լ=4473 զմմ մետաղական փակ խողովակաշարի տեղադրում:	53,153.3	Նախագծված է:	940.0	Արշալույս համայնքի 500.0 հա հողատարածքները ոռոգվում են մեխանիկական եղանակով Ակնայիճի պոմպակայանից և թվով 6 հատ խորքային հորերով: Գտվի մեխանիկական ջրի ծավալը տարեկան կազմում է միջինը 18.0 մլն խ.մ. էլ. է. ծախսը- 1.5 մլն. կվտ. ժամ: Խողովակաշարի կառուցման արդյունքում յուրաքանչյուր եղանակային բարեկատու տարվա վաղ գարնանը և ուշ աշնանը սեյզոնալ ջրերի օգտագործման հաշվին կտնտեսվի 3.0-4.0 մլն խ.մ մեխանիկական եղանակով մատակարարվող ջրի ծավալ և 300-320.0 հազ. կվտ. ժամ. էլ. էներգիա: Գործող գներով տարեկան միջինը կտնտեսվի 50.0 մլն դրամ:
		Ակնայիճ համայնքի 6 խորքային հորերի վերանորոգում	Խորքային հորերը շահագործվում են շուրջ 25 տարի և պոմպային սարքավորումները բազմիցս ենթարկվել են հիմնանորոգման, ֆիզիկապես և բարոյապես մաշված են: Անհրաժեշտ է պոմպային սարքավորումները փոխարինել նորերով:	6,000.0		120.0	Կապահովվի Ակնայիճ համայնքի շուրջ 200 հա հողատարածքների բնականոն ոռոգումը, կնտանակարարվի 1.6 մլն խ.մ ոռոգման ջրով, կապահովվի ծախսվող էլ. էներգիայի դրվածքային-0.406 կվտ. ժամ/խ.մ տեսակարար ծախսը, որը ներկայումս կազմում է 0.45. Տարեկան կտնտեսվի 70.4 հազ. կվտ. ժամ էլ. էներգիա:
		Ամբերդի և Աղավնատուն 1-1 պոմպակայանների մեխանիկական ոռոգման փոխարինումն ինքնահոս եղանակի	Գլխամասային հանգույցի կառուցում Քասախ գետի վրա և հեռացող խողովակաշար Դ-420 մմ Լ-1900մ	6,500.0	6500		Ամբերդ համայնքի 140 հա. հողերի հողալի ջրամատակարարում, շահագործման ծախսերի նվազում և էներգիայի տնտեսում տարեկան 0.404 մլն կվտ/ժ
2.	«Արարատ» ՑՕԸ	2 պ/կ-ներում փոքր արտադրողականության սարքավորումների տեղադրում	Պ/Կ-ների շահագործման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում մղել ավելի փոքր քանակի ջուր, քան տեղակայված մեկ պոմպային ագրեգատի արտադրողականությունն է: Անհրաժեշտ է Արագածի-1 և Արարատի ձախ ճյուղ պ/կ-ների համար ձեռք բերել և տեղադրել յուրաքանչյուրում մեկ հատ փոքր արտադրողականության պոմպային սարքավորումներ:	8,500.0	Նախագծված է:	170.0	Կինայի Արագածի-1 և Արարատի ձախ ճյուղ պ/կ-ների միջոցով մղվող ջրի քանակությունը և տարեկան կտնտեսվի միջինը 900.0 հազ. կվտ. ժամ էլ. էներգիա, որից Արագածի-1 պոմպակայանում-400.0 հազ. կվտ. ժամ, Արարատի ձախ ճյուղ պոմպակայանում - 500.0 հազ. կվտ. ժամ
		Այգավան համայնքի խորքային հորի հորատում	2008 թ. համայնքի N 0108 ծածկագրով խորքային հորը փլուզվել է և 70.0 հա հողատարածքներ մնացել են առանց ոռոգման ջրի: Փյունված խորքային հորի վերականգնումը (մաքրումը), որը շահագործվել է շուրջ 30 տարի տեխնիկապես և ֆինանսապես Նպատակահարմար չէ: Նույն տեղում անհրաժեշտ է հորատել նոր հորատանցք և կահավորել փլուզված հորատանցքից ապամոնտաժված պոմպային և էլեկտրական սարքավորումներով:	17,100.0	800	330.0	Կվերականցվի Այգավան համայնքի 70.0 հա հողատարածքների ոռոգումը և կնտանակարարվի տարեկան միջինը 560.0 հազ. խ.մ ոռոգման ջուր:
3.	«Մասիս» ՑՕԸ	Գետափնյա ջրանցք	Երևան քաղաքի և Գետափնյա գյուղի տարածքով անցնող 8000 զմմ երկարությամբ հողային հունով ջրանցքի մաքրում բերվածքներից և բուսականությունից: Շահագործման ճանապարհի վերականգնում:	10,300.0	Նախագծված է:	200.0	Կմեծանա ջրանցքի ջրորոգունակությունը և կապահովի Գետափնյա համայնքի 670 ջրօգտագործողների 80 հա հողատարածքների ոռոգումը, որից 20 հա ոռոգվում էր մեխանիկական եղանակով «Գետափնյա» պոմպակայանով: Ինքնահոս եղանակով 20 հա հողատարածքները ոռոգվող դերքում տարեկան կտնտեսվի 18.8 հազ. կվտ. ժամ էլ. էներգիա
		Մասիսի տարածաշրջանի 22 ինքնաշարվանող հորատանցքների փակագնային ռեժիմի կարգաբերում և ջրաչափական սարքավորումների տեղադրում	Ինքնաշարվանող հորերի վրա փականների և մետաղական կոնկրետի տեղադրում, գոյություն ունեցող ջրագծերի միացում, ջրաչափական սարքավորումների տեղադրում:	59,590.0	Նախագծված է:	990.0	Կապահովվի ինքնաշարվանող հորատանցքերի իշխման տակ գտնվող հողատարածքների ջրի կառավարումը և հաշվառումը:
		Մասիսի պոմպակայանի 2 էլ. շարժիչների փոխարինում	Մասիս ջ/կ-ի 2 400 կվտ. ժամ հզորության էլ. շարժիչների փոխարինում 250 կվտ. ժամ հզորության էլ. շարժիչներով:	5,000.0		100.0	Տարեկան կտնտեսվի 500 հազ. կվտ. ժամ էլ. էներգիա
			Մասիսի տարածաշրջանի Մասիս				Կվերականցվի համայնքների 173.0 հա սեփականաշնորհված և

		բացասական ճնշումով ինքնաշարժվող հորատանցքերի վրա հորիզոնական պոմպերի տեղադրում	քաղաքի, Սայաթ-Նովա, Հայաստան, Հովտաշատ, Նիզամի և Չորակ գյուղերի 10 բացասական ճնշումով ինքնաշարժվող հորատանցքերի վրա փոքր տեսակարար ծախս ունեցող հորիզոնական պոմպերի տեղադրում և հեռացող ջրագծերի անցկացում:	20,000.0		400.0	տնամերձ հողատարածքների ոռոգումը:
4.	«Թալին» ՋՕԸ	9 պոմպակայանների նորոգում	Թալին-1, Շորեկի, Գետափի, Սրագած 1, 2, Սարայանջի 2 աստիճան, Արեգի 7-2 աստիճանի, Դաշդադեմի 2 աստիճանի, Լեռնագոգի պ/կ-ներ: Լորոզվելու և փոխարինվելու են շարքից դուրս եկած և ֆիզիկապես մաշված էլ. և հիդրոմեխ. սարքավորումները:	27,000.0	Նախագծված է:	540.0	Կապահովի Արագած, Արգինա, Գետափ, Թալին, Մաստարա, Չարինջա և Արեգ համայնքների 4100 հա հողատարածքների ոռոգումը:
5.	«Մարտունի» ՋՕԸ	Երանոսի, Ստղաձորի, Ծովինարի և Վ. Գետաշենի պ/կ-ներ:	Պոմպային սարքավորումների նորոգում, ձեռքբերում և տեղադրում	30,000.0	Նախագծված է:	600.0	Կապահովի Զ/կ-ների իշխման տակ գտնվող Երանոսի, Ստղաձորի, Ծովինարի և Վ.Գետաշենի համայնքների 7900 ջրօգտագործողների 1890 հա հողատարածքների անխափան ոռոգումը և Զ/կ-ների անվտանգ շահագործումը:
6.	«Մեղրի» ՋՕԸ	16 պոմպակայանների և 2 խորքային հորեր	Արաքս -1, 2, Կարճևան-1, Մեղրի 1, 2, 3, Ավանք-1, 2, Ավանք 1-1, Ծվանիձոր 1, 2, Շահաձոր 1, Նյուվաղի 1, 2, 3, Բուրդաղուց պ/կ-երի և Ազարակի խ/հ ու Ավանքի խ/հ: Լորոզվելու և փոխարինվելու են շարքից դուրս եկած և ֆիզիկապես մաշված էլ. և հիդրոմեխ. սարքավորումները	31,500.0	Նախագծված է:	630.0	Կապահովի Լռնաձոր, Ծվանիձոր, Ավանք, Մեղրի և Ազարակ համայնքների , ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության «Սջակցություն Դատապարտյալին» իմսադրամի 441 հա և 1060 ջրօգտագործողների այգիների բնականոն ոռոգումը:
7.	«Վարդենիսի» ՋՕԸ	«Ավազանի» ջրատարի վերանորոգում	1980 զմ. երկարությամբ Դ=400մ տրամագծով երկաթբետոնե խողովակաշարի առանձին խցանված հատվածների և ջրաժան հորերի մաքրում, վերանորոգում, 12 հարթ փականների փոխարինում:	4,185.0	Նախագծված է:	80.0	Կապահովի Ավազան, Փոքր Մարտիկ և Լորակերտ համայնքների 250 ջրօգտագործողների 208.0 հա հողատարածքների ինքնահոս եղանակով ոռոգումը, կոնտեսվի Լորակերտ համայնքի խորքային հորի շահագործման արդյունքում ծախսվող 12.0 հազ. կվտ. էլ. է:
8.	«Կոտայքի» ՋՕԸ	Կոտայքի ջրանցքի գլխամասի թունելի վթարված հատվածի վերանորոգում	Վթարված դյուկերի մետաղական խողովակի Դ=1600 մմ ապամոնտաժում և Լորի մոնտաժում	6,730.0	Նախագծված է:	130.0	Կապահովի 9122 ջրօգտագործողների 4776 հա հորերի անխափան ոռոգումը:
		Վարչական շենքի նորոգում	Տանիքի վերանորոգման աշխատանքներ	4,500.0	Նախագծված է:	90.0	Կարելավի ծառայողական անձնակազմի աշխատանքային կայանները:
9.	«Սիսիան» ՋՕԸ	Ույծ համայնքի «Տևկարանի ջրանցքի» վերանորոգում	Ջրանցքի հատակի և պատերի երեսապատում բետոնով, կարերի սվաղ ու ե/բ սալիկների տեղադրում:	11,100.0	Նախագծված է:	220.0	Կապահովի Ույծ և Սիսիան համայնքների 350 ջրօգտագործողների 60 հա հողատարածքների բնականոն ոռոգումը:
		Դարբասի դեղիվացիոն թունելի վերանորոգում	Դ=426 մմ և Դ=325 մմ տրամագծով 290 զմ երկարությամբ քայքայված մետաղական խողովակաշարերի փոխարինում	6,900.0	Նախագծված է:	140.0	Կապահովի Շամբ, Դարբաս, Որոտան և Լենն համայնքների 370 ջրօգտագործողների 150 հա հողատարածքների բնականոն ոռոգումը:
10.	«Ուտիք» ՋՕԸ	Վարչական շենքի նորոգում	Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ	3,500.0	Նախագծված է:	70.0	Կարելավի ծառայողական անձնակազմի աշխատանքային կայանները:
11.	«Փարպի» ՋՕԸ	Վարչական շենքի նորոգում	Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ, տանիքի վերանորոգում, լուսամուտների և դռների փոխարինում, սան. հանգույցի կառուցում	16,000.0	Նախագծված է:	320.0	Կապահովի ծառայողական անձնակազմի աշխատանքային կայանները:
12.	«Ապարան - Արագած» ՋՕԸ	Գեղարտ գետի գլխամասային հանգույցի վերանորոգում	Գաբիոնի շարվածք, քարե լիցք, ե/բ կամրջակի կառուցում, մետաղական հարթ փականների վերանորոգում և նորի կառուցում	10,000.0	Նախագծված է:	200.0	Կապահովի Արայի, Վարդենուտ, Ափնա, Շենական, Հարթավան, Արագած, Ծաղկաշեն և Քուչակ համայնքների 2100 ջրօգտագործողների 800 հա հողատարածքների բնականոն ոռոգումը:
		Հայավար- Ապարան ջրատարի Մուլց և Սարայանջ համայնքների ջուր մատակարարող բաժանարարների վերանորոգում	Դ-219 մմ և Դ-150 մմ խողովակների տեղադրում շուրջ 500 զմ երկարության ճնշումային ավազանի վերանորոգում	7,000.0	Նախագծված է:	140.0	Կապահովի Մուլցի պոմպակայանի իշխման տակ գտնվող Մուլց և Սարայանջ համայնքների 220 ջրօգտագործողների 180 հա սեփականաշարված հողերի ինքնահոս եղանակով ոռոգումը: Տարեկան կոնտեսվի 70.0-80.0 հազ. կվտ. ժամ էլ. ենթգիա:
13.	«Գավառ» ՋՕԸ	Վարչական շենքի նորոգում	Տանիքի վերանորոգման աշխատանքներ և կոյուղագծի կառուցում	5,010.0	Նախագծված է:	100.0	Կապահովի ծառայողական անձնակազմի աշխատանքային կայանները:
14.	«Շամիրամ» ՋՕԸ	Ազարակի պ/կ-ի 1-ին և 2-րդ աստ. վերանորոգում	1-ին աստիճանի ՑԱՍ-18-255 պոմպի ձեռքբերում և տեղադրում: 2-րդ աստիճանի ՑԱՍ-180-255 պոմպի և 250 կվտ հզորության էլ. շարժիչի վերանորոգում ու ՑԱՍ-180-170 պոմպի և 132 կվտ հզորության էլ. շարժիչի ձեռքբերում և տեղադրում	5,000.0	Նախագծված է:	100.0	Կապահովի Ազարակ համայնքի 120 ջրօգտագործողների 101 հա տնամերձերի ոռոգումը:
15.	«Կապան» ՋՕԸ	«Գեղի-Եղվարդ» ջրագծի վերանորոգում	Ջրագծի ՊԿ05+50-ից ՊԿ07+30-ի Դ=530 մմ տրամագծով և Լ=180 զմ երկարությամբ խողովակաշարի վերանորոգում	6000.0	Նախագծված է:	120.0	Կապահովի Լեռնաձոր, Կապան, Եղվարդ, Ուժանիս, հարանց և Ազարակ համայնքների 480 ջրօգտագործողների հողերի ոռոգումը:
16.	«Ամբերդ» ՋՕԸ	«Ամբերդ» մայր ջրանցքի վերանորոգում	Արբոցմենտե խողովակների փոխարինում 273 մմ տրամագծով, շուրջ 1000 զմ երկարությամբ մետաղական խողովակաշարով	7000.0	Նախագծված է:	140.0	Կապահովի Վերին Սասունի և Լեռնարտ համայնքների 150 ջրօգտագործողների 200 հա հողերի ոռոգումը:

17.	«Վշտարակ» ՋՕԸ	«Բաղրամյան» համայնքի ներտնտեսային ցանցերի ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքներ	Դ=200 մմ տրամագծով Լ-660մ և Դ-300մմ Լ-540մ երկարությամբ մղման խողովակաշարերի ապամոնտաժում, տեղափոխում 10 կմ և մոնտաժում Ջրամատակարարման մեխանիկական եղանակի փոխարինումն ինքնահոսի	8908.3	Նախագծված է:	174.7	Բաղրամյան համայնքի թվով 200 ջրօգտագործողների 130 հա հողերի ինքնահոս ոռոգում: Տարեկան շուրջ 25,0 մլն դրամի էլ. Էներգիայի տնտեսում:
		Արայի համայնքի «Երզնկայի կամարներ» տարածքի ներտնտեսային ցանցի վերանորոգում	Դ-150 մմ տրամագծով Լ-1010 մ երկարությամբ մետաղական խողովակաշարի մոնտաժում	8525.2	Նախագծված է:	167.2	Արայի համայնքի թվով 90 ջրօգտագործողների 45 հա հողերի լիարժեք ջրամատակարարում:
		Վշտարակ քաղաքի Տանձանոց կոչվող թաղամասի տնամերձ հողատարածքների ներտնտեսային ցանցի վերականգնում	Դ=250մմ տրամագծով, Լ=2200 գծմ երկարությամբ ջրատարի կառուցում, Դ=150մմ տրամագծով, Լ=3800 գծմ երկարությամբ ներտնտեսային ցանցի կառուցում	5900.0	5900		
18.	«Երևան» ՋՕԸ	«Նորագավթի ջրանցքի» Դ461+00-Դ465+40 վթարված հատվածի շրջանցող ջրատարի վերանորոգում	Շենգավիթի հիդրոհանգույցից մինչև Լ. Չարբախի հիդրոհանգույց Լ=520 գծմ երկարությամբ Դ=315մմ տրամագծով պոլիէթիլենային խողովակի տեղադրում	9370.5	Նախագծված է:	187.4	Ոռոգման ջրով կապահովվեն Շենգավիթ վարչական շրջանի Լ.Չարբախ և Լ. Շենգավիթ թաղամասերի թվով 450 ջրօգտագործողների 250հա հողատարածքները:
		Վարչական շենքի նախագծում	Ընկերությունը չունի վարչական շենք	1200.0	1200.0		Կապահովվի ծառայողական անձնակազմի աշխատանքային պայմանները:
19.	«Վաղարշապատ» ՋՕԸ	Եջմիածին համայնքի 2 խորքային հորերի փոխարինում ինքնահոս եղանակով 2 բաժանարարներով	Թավթառանձոր տարածքի NN 1 և 2 փակ բաժանարարների կառուցում Դ-200 մմ 480 գծմ և Դ-160մմ 710 գծմ պոլիէթիլենային խողովակներով	8178.2	Նախագծված է:	160.0	Կապահովվի Եջմիածին համայնքի 40 ջրօգտագործողների 60 հա հողատարածքների ոռոգումը: Տարեկան կտնտեսվի 84520 կվտ/ժամ էլ. Էներգիա և 2,356 մլն դրամ գումար:
		Բաղրամյանի ներտնտեսային նշանակության պոմպակայանի վերանորոգում:	Նախատեսվում է տեղադրել 16ՆԴ4 մակնիշի մեկ հատ պոմպային սարքավորում իր 75 կվտ. ժամ հզորությամբ էլ.շարժիչով, կառուցել Դ=400 մմ և Դ=500 մմ տրամագծով մետաղական խողովակաշարեր համապատասխանաբար 220 և 120 գծմ երկարության, մասնակի վերանորոգել պոմպակայանի շենքը	15000.0		300.0	Կապահովվի Բաղրամյան համայնքի 60 ջրօգտագործողների 80 հա հողատարածքների ոռոգումը:
20.	«Զրվեմ-Զորադրյուր» ՋՕԸ	Գեղարդավճի ջրամբարի և 7 աղբյուրների խմելու ջրի կապտամների ավելցուկային ջրերի արդյունավետ օգտագործման նախնական նախագիծ		20,000.0	20,000.0		Գեղարդավճի ջրամբարի և 7 աղբյուրների խմելու ջրի կապտամների ավելցուկային ջրերի արդյունավետ օգտագործման ապահովում:
21.	«Որոտան» ՋՕԸ	Որոտանի մայր ջրանցքի Դ4 23+07- Դ4 37+97 մետաղական ոլուկերի վերականգնում	2009 թ. հունիսին տեղի ունեցած սողանքի հետևանքով վթարվել է ոլուկերի ծախ ճյուղը: Երկրորդ սողանքի պատճառով, որը տեղի ունեցավ 2010 թ. սեպտեմբերին՝ վթարվեց ոլուկերի աջ ճյուղը: Նախատեսվում է շինարարական աշխատանքներն իրականացնել երկու փուլով: 2011 թ. կիրականացվեն առաջին փուլի աշխատանքները, որով կկատարվի աջ ճյուղի վերականգնումը:	84,920.3	4100.0	1151.7	Առաջին փուլի աշխատանքները կապահովեն ոլուկերի աջ ճյուղի լիարժեք աշխատանքը: Կապահովվի ջրանցքի իշխման տակ գտնվող 8 սահմանամերձ համայնքների հողերի ոռոգումը:
22.	«Մուսալեռ» ՋՕԸ	Եջմիածնի ջրանցք	Նախատեսվում է վերականգնել ջրանցքի հատումը Երևան-Եջմիածին-Արմավիր մայրուղու հետ, որը գտնվում է վթարային վիճակում: Վերականգնվում է ջրանցքի մոտ 250 մ Գ-ձև բլրկներով հատվածը և վերակառուցվում է մոտ 800մ-ԼԸ-8 տիպի վաքերով ջրանցքի հատվածը:	1,900.0	1,900.0		Նախագիծը կապահովի մայրուղու անվտանգությունը, ինքնահոս եղանակով կոռզվի Եջմիածին համայնքի մոտ 166 հա հողերը, որը ներկայումս ոռոգվում է 4 հատ խորքային հորերի միջոցով, կտնտեսվի տարեկան 178հազ կվտ/ժ էլեկտրաէներգիա և կբարձրացնի ջրապահովությունը 96 հեկտարի վրա:
23.	«Ազատ» ՋՕԸ	Մխչյան պոմպա-կայանի 1-ին աստիճանի հեռացնող ջրանցքի դոտացիոն ջրատարի կառուցում	Գլխամասային հանգույցի կառուցում Ազատ գետի վրա և հեռացնող խողովակաշար Դ-820 մմ Լ-1450 մ	3,900.0		3,900.0	Մխչյան պոմպակայանի 1-ին աստիճանի իշխման տակ գտնվող 5 համայնքների 2100հա հողերի հուսալի ջրամատակարարում, Էներգիայի տնտեսում տարեկան 1.8 մլն կվտ/ժ
Ընդամենը				535,370.8	40,400.0	9,011.0	
24.	«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	Արմավիրի գլխամասային հիդրոհանգույցի վերանորոգում	Արմավիրի մայր ջրանցքի գլխամասային հիդրոհանգույցի վազման փականների հատակի քայքայված հատվածի վերանորոգում ե/բ-ով, փականների և այլ մետաղական մասերի մասնակի նորոգում և յուղաներկում	28000.0	1400.0	560.0	Կնվազեն ջրի կորուստները, կավելանա հիդրոհանգույցի երկարատև շահագործումը:
25.	«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	Մեծամոր (Սև ջուր) ա/կ, d=1220 մմ, d=720 մմ. ճնշման խողովակաշարերի փոխարինում	Դ=1220 մմ, Դ=720 մմ ճնշումային խողովակաշարի փոխարինում, ե/բ հենարանների վերանորոգում	20400.0	1020.0	408.0	Կբարելավվի Ակնայիճ համայնքի ջրամատակարարումը:
26.	«Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	Կապի ջրամբարի շին. թունելի մուտքամասի նորոգում և շանդրի (փականի) ապամոնտաժում	Շին. թունելի մուտքամասի բետոնե պատերի ամրացում և շանդրի (փականի) ապամոնտաժում	2500.0	125.0	50.0	Շին. թունելի ջրթողունակության ապահովում և հուսալիության բարձրացում:

27.	«Մխուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ	Սխուրյանի ջրամբարի իռիգացիոն ջրթողի նորոգում	Ջրամբարի իռիգացիոն ջրթողի ելքամասի գալերիայի քայքայված մետաղական պաշտպանիչ պատյանի նորոգում:	4100.0	205.0	82.0	Ջրի ելքերի թողունակության և ջրթող փակարկի անվտանգության ապահովում:
	Ընդամենը			55,000.0	2,750.0	1,100.0	
28.	«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ	Ազատի ջրամբարի շինարարական և վերանորոգման աշխատանքներ	Հեղեղային ջրի ելքի ջրընդունիչ կառուցվածքի, ջրահեռարգահոսի կարերի և ջրծեծ (ջրմարիչ) ջրթափային պատվարի և ներքին բիեֆի գետահունային լծորդիչի վերականգնման աշխատանքներ	67134.5	1735.5	1042.0	Կբարձրանա Ազատի ջրամբարի շահագործման անվտանգությունը, նորմալ կրթական գարնան հեղեղումները, կապահովվի շրջակա միջավայրի ավերվածությունների անվտանգությունը:
29.	«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ	Արտաշատի մայր ջրանցքի սեգմենտային փակարկի նորոգում և կարգաբերում	Սեգմենտային փակարկի վերանորոգման աշխատանքներ	4284.0		84.0	Կբարելավվի ջրի կարգավորումը, կվազան ջրի կորուստները:
30.	«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ	Արտաշատի ջրանցքի Պ4548+90-ից մինչև Պ4 549+10 վթարված հատվածի նորոգում	Վերականգնել ջրանցքի հիմքը և վերանորոգել ջրհեռացնող ջրանցքը	3162.0		62.0	Կվերանան ջրի կորուստները, կբարելավվի ջրի մատակարարումը:
31.	«Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ	Գեղարդայի ջրանցքի մոտեցնող ջրանցքի նորոգում	Մոտեցնող ջրանցքի պատերի և հատակի նորոգում	5054.0		54.0	Կապահովվի ջրամբարի (ցվածությունը, կվազան ջրի կորուստները:
	Ընդամենը			79,634.5	1,735.5	1,242.0	
32.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Լավվար թիվ 1 ջրհան կայան	Ճնշումային խողովակաշարի առանձին հատվածի, պոմպի, էլ. շարժիչի և էլ. սարքավորումների փոխարինում նորով	13000.0	650.0	260.0	Կվերանա ճնշումային խողովակաշարից ոռոգման ջրի կորուստները, կտնտեսվի զգալի քանակության էլ. էներգիա, կպակասի շահագործման ծախսերը և ոռոգելի կղաղես նոր 12 հա հողատարածք:
33.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Չեյթուն-Հաղթանակ թիվ 2 ջ/կ	Մալուխագծի և էլ. սարքավորումների փոխարինում նորով, տանիքի հիմնանորոգում ճնշումային խողովակաշարի նորոգում	5000.0	250.0	100.0	Կվերանա ոռոգման ջրի և էլ. էներգիայի ոչ հաշվարկային կորուստները, կտնտեսվի զգալի քանակության էլ. էներգիա, կպակասի շահագործման պրոցեսում կատարվող ընթացիկ նորոգման ծախսերը և կբարձրանա պոմպերի արտադրողականությունը:
34.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Չեյթուն թիվ 1 ջ/կ	Մալուխագծի և էլ. սարքավորումների փոխարինում նորով, ճնշումային խողովակաշարի առանձին հատվածի նորոգում, պոմպի հիմնանորոգում	5000.0	250.0	100.0	Կվերանա ոռոգման ջրի և էլ. էներգիայի ոչ հաշվարկային կորուստները, կտնտեսվի զգալի քանակության էլ. էներգիա, կպակասի շահագործման պրոցեսում կատարվող ընթացիկ նորոգման ծախսերը և կբարձրանա պոմպերի արտադրողականությունը:
35.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Արճիս-Շնոր ջ/կ	Պոմպերի և էլ. շարժիչի փո-խարինում հիմնանորոգվածով, էլ. շարժիչի և էլ. սարքավորումների փոխարինում նորով, վակուում համակարգի փոխարինում նորով, շարժական էլ. ամբարձրի տեղադրում, հետադարձ փականների փոխարինում նորով: Ճնշումային խողովակաշարի նորոգում:	6000.0	300.0	120.0	Կվերանա ոռոգման ջրի և էլ. էներգիայի ոչ հաշվարկային կորուստները, կտնտեսվի զգալի քանակության էլ. էներգիա, կպակասի շահագործման պրոցեսում կատարվող ընթացիկ նորոգման ծախսերը և կբարձրանա պոմպերի արտադրողականությունը, կարագանա ընթացիկ նորոգումների պրոցեսը, կկրճատվի պոմպերի թողարկման պրոցեսի ժամանակը:
36.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Ճոճկան թիվ 1 ջ/կ	Պոմպի և էլ. շարժիչի փոխարինում հիմնանորոգվածով, էլ. սարքավորումների փոխարինում նորով, ճնշումային խողովակաշարի նորոգում	5000.0		250.0	Կվերանա ոռոգման ջրի և էլ. էներգիայի ոչ հաշվարկային կորուստները, կտնտեսվի զգալի քանակության էլ. էներգիա, կպակասի շահագործման պրոցեսում կատարվող ընթացիկ նորոգման ծախսերը և կբարձրանա պոմպերի արտադրողականությունը: Պոմպերը մեկ հա-ի ոռոգման համար անհրաժեշտ ջրի քանակը կապահովվեն ավելի կարճ ժամանակում:
37.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Այրում-Ճոճկան թիվ 1 ջ/կ	Էլ.շարժիչի, պոմպի և էլ. սարքավորումների փոխարինում նորով: Ճնշումային խողովակաշարի առանձին հատվածի հիմնանորոգում, տանիքի նորոգում	7000.0	350.0	140.0	Կվերանա ջրի կորուստները, կբարձրանա աղբեղանների արտադրողականությունը, կտնտեսվի էլ. էներգիան և կպակասի շահագործման ծախսերը: Պոմպերը մեկ հա-ի ոռոգման համար անհրաժեշտ ջրի քանակը կապահովվեն ավելի կարճ ժամանակում:
38.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Բազմաստիճան թիվ 4 ջ/կ	Պոմպի, էլ. շարժիչի փոխարինում հիմնանորոգվածով, աղբեղանի բետոնյա խարսխային հիմնատակի հիմնանորոգում, ճնշումային խողովակաշարի նորոգում	7000.0	350.0	140.0	Կվերանա ոռոգման ջրի ոչ հաշվարկային կորուստները, և համապատասխան էլ. էներգիայի կորուստը, կտնտեսվի զգալի էլ. էներգիա, կբարձրանա արտադրողականությունը և կպակասի շահագործման ծախսերը: Կարագացվի ջ/կ-ի շահագործման ժամանակ ընթացիկ նորոգման գործընթացը:
39.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Կենտրոնական պահեստ	Տանիքի հիմնանորոգում	5000.0	250.0	100.0	Պահեստավորվող հումք, նյութերի և սարքավորումների պահպանությունը կլինի ապահով, անվտանգ: ժամանակի ընթացքում կռոգիայի չի ներթափվի կամ խնամվությունից չի քայքայվի, որի հետևանքով կպակասի վերանորոգման ծախսերը:
40.	«Դեբետ-Աղստ-ջրառ» ՓԲԸ	Հախումի ջրամբար	Ժ=800 մմ ուժային շարժաբերով փակարկի փոխարինում նորով, իռիգացիոն ջրթողի մաքրում և մեկուսացում, էլ. սարքավորումների նորոգում և վթարային ջրի ելքի նորոգում	7000.0	350.0	140.0	Կապահովվի ջրամբարի անվտանգությունը և կիջատանա ՀՏԿ-ների շահագործումը, կապահովվի շահագործող անձնակազմի աշխատանքային անվտանգությունը, կպակասի ֆիլտրացիան և կվերանա նրանցից բխող վտանգները:
	Ընդամենը			60,000.0	3,000.0	1,200.0	
41.	«Մեյիողացիա» ՓԲԸ	Լիճք գյուղի չորացման ցանցի վերականգնման և վերակառուցման աշխատանքների շարունակության համար նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանայում:	Չորացման ցանցի վերականգնման և վերակառուցման աշխատանքների շարունակություն	2000	2000.0		Նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման և փորձաքննության արժեքը նախատեսված է նախագծի վերանայման համար:
	Ընդամենը			2,000.0	2,000.0		
ԸՆԴԱՄԵՆՆԵՐ				732,005.3	49,885.5	12,553.0	

ԱՄԲՈՂՆԵՐ ԸՍՏՈՒ ՇՐՈՒՄ ԿԱՑՈՒՄ	1,065,000.0	49,885.5	18,980.4
ԱՄԲՈՂՆԵՐ ԸՍՏ ՇՐՈՒՄԻ	1,065,000.0	49,885.5	18,980.4

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության  
աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սարգսյան**